

բոլորն ի վառաւոր օրերուն մէջ եւ ինչ ե-
ղանակաւ վախճան ունեցաւ այդ խելացը-
նոր վեհապետն :

Իսկ Վիքորիա Թագուհւոյն յիսնամեայ
իշխանութիւնն այլապէս տեւական փայլով
մը կը փայլի : Յիշէ յաճախ պատերազմներ
տեղի ունեցան , այդ պատերազմը գրեթէ
միշտ նպաստաւոր եղան Մեծին Բրիտանիոյ .
ո՛չ միայն անդ լիացիք ափ մը հող չը կորու-
սին , այլ եւ իրենց ստացուածներն ըն-
դարձակեցին հսկայական համեմատու-
թեամբ : Գաղթականութիւնը . ահա՛ այն
նոր զօրութիւնը զոր ստացաւ Մեծն Բրի-
տանիա վերջին տասն հինգ ամաց մէջ եւ
որ հնդկական կայսրութեան վրայ կը բար-
դուի կաշմելու համար վիթխարի ամբող-
ջութիւն մը զոր հարկ է այժմ անբաժան
պահել ջանալ . քաղաքական գործ՝ որ ան-
տարակոյս Անգլիոյ զօրութիւնը պիտի
լրացնէ : Այդ գործ կը պատրաստուի այ-
ժմ եւ ի գլուխ պիտի ելնէ շնորհիւ Կալ-
էսի իշխանին մէկ բեղմնաւոր խորհրդոյն :
Անգլիոյ գահաժառանգ իշխանն առաջար-
կելով հիմնարկութիւնն Գաղթային Հաս-
տատութեան մը (Բոյժ-Էլ-Էն-Էն-Էն-Էն) , ոյր
հիմնարկութիւնը Թագուհւոյն անձամբ պիտի
կատարէ , ուզած է կապ մ'ստեղծել որ , հե-
ռաւորութեանց հակառակ , պիտի միացնէ
բոլոր այդ ցրուեալ տարրերն ի մի համա-
ցեղութիւն : Գալով ճարտարարուեստից եւ
տարագործութեանց , որք իրենց բարգա-
ւաճման գաղաթնակէտն հասած են վերջին
կէս դարուն մէջ , անցողակի տաղանդ մը
միայն անցունելու վրայ են անոնք : Անգ-
լիա հաշտ է բոլոր մեծ ազգաց հետ , եւ
Յրանսա , իւր վաղեմի հակառակորդն , իրեն
բարեկամ դարձած է այժմ . կը սիրենք
յուսակ թէ այս բարեկամութիւն , որ այն-
քան սքանչելի արդիւնքներ ունեցաւ , չպի-
տի վտանգուի երբէք եւ թէ քաղաքակըր-
թիչ երկու մեծ ազգերն պիտի շարունակեն
զուգընթաց յառաջանալ այն շաւղէն զոր
գծած են բաւորաւ դարէ ի վեր :

Պիտի ըսուի թէ մթին կէտեր կը նշմարուին .
երկրագործութիւնն յետեւալ վիճակի մէջ
է , իւրանտա՛ յուզմամբ լի եւ ի Կեդրոնա-
կան Ասիա՛ միշտ անստոյգ եւ հետեւաբար
վրդովիչ կացութիւն մը : Բայց , բոլոր
մարդկային հաստատութեանց նման , ամե-
նէն աւելի բազմաբնիկ եւ փառաւոր իշ-
խանութիւնը գերծ չեն հոգեբէ եւ դժ-
ուարութիւններէ որք անբաժան մասն են
ամենայնի որ , կը շարժի , որ կը խորհի , որ
կ'ապրի երկրիս վրայ :

Վիքորիա Թագուհւոյն վաթսուեւ-ու-
թարեկան է : Աստուած որ ամենէն դաուն
ցաւերն իսկ չէ խնայած նորա սրտին՝ իբր
կին եւ իբր մայր , թոյլ տուած է սակայն
որ ազատ լինի նա այն մարմնական տկա-
րութիւններէն որք կեանքը կը կարճեցու-
նեն կամ ճշմարիտ տանջանք մը կը դարձու-
նեն զայն : Առողջ մարմնոյ եւ առողջ մտքի
տէր է նա եւ պահած իւր վեհութիւնն :
Եթէ քանի մ'սպիտակ թելեր կը նշմարուին
իւր մաշկերուն մէջ , նորա կապոյտ , յստակ
եւ կորովարիւր աչքերը պահած են միշտ
իրենց բոլոր կենդանութիւնն ու բոլոր բա-
րեւրութիւնն : Աստիճան մը գերութիւն
որ վայլած է նմա , քաղաք մը որ ո՛չ
հպարտ է ո՛չ ամբարտաւան , այլ որ գիտէ
միշտ վեհապանծ մնալ , քաղցրութիւն մը
չըթանքը վրայ , պարզութիւն մը շարժման-
քը մէջ , անխառն եւ յստակ ձայն մը , ահա
ն . Վեհափառութեան անձին նկարագիրը
զոր կրնանք ընել յամի շնորհաց 1887 :

Համակրանաց ամենաջերմ արտայայտու-
թեանց մէջ իսկ , նորա գէժքին վրայ կը
նշմարուի քրիստոնէական համակերպութիւն
մը եւ ծանրախոհութիւն մ'առանց ցուցա-
մուտութեան , հետեւեալք իւր կարի դառ-
նադէտ վշտաց :

Թագուհւոյն ծնած է 1819 մայիս 24ին ,
Քէսինկընի պալատան մէջ զոր վերեւ յի-
շեցինք , Քէնդի դուքսէն եւ Սաքս Քուպու-
կի Վիքորիա իշխանուհիէն , այրի Լէյ-
նինկէն իշխանուհւոյն , եւ մկրտուած Ալէք-
սանտրինա Վիքորիա անուամբ : Ալէք-
սանտրինա՝ Ռուսիոյ Ալէքսանդր Այսսեր
անուամբ , որ մին էր իւր կնքահարց եւ
Վիքորիա՝ իւր մօր անուամբ : Շատ ժա-
մանակ ընտանեկան շրջանակի մէջ « Կոթ-
րի՛ն Տրինա » կը կոչէին զնա . իւր հօր եւ
հօրեղբօր , Քլարէնսի դուքսին , յաջորդական
մահէն յետոյ միայն , երբ գահաժառանգ
եղաւ , փոքրիկն Տրինա պաշտօնապէս ծա-
նօթացաւ իւր Վիքորիա իշխանուհի :

Յոյժ պարզութեամբ մեծցած էր մօր մը
ձեռամբ ոյր անձնութեան իշխանն ու գորովն
անսահման էին , եւ հիմնաւոր դատարար-
կութիւն մ'առած՝ ուսանելով ո՛չ միայն օ-
տար լեզուներ , այլ եւ լատիներէն , նուա-
գածութիւն , նկարչութիւն , ստացած էր նա-
եւ կրօնական կրթութիւն մը որ ապագային
այնչափ զօրաւոր նեցուկ մը պիտի լինէր իւր
ընտանեկան դժբաղդութեանց մէջ : Տասն
եօթ տարեկան էր , երբ առաջին անգամ
տեսաւ իւր երկու հօրեղբօրորդ ինքը , Սաքս
Քուպուրի-Կոթայի Էրնէստ իշխանն եւ Ալ-
պէրդ իշխանն որք Գերմանիայէն Լոնտոն
եկած էին յայցելութիւն Քէնդի իշխա-
նուհւոյն : Շատ հրապուրիչ էին այդ երկու
իշխաններն ալ . սակայն Ալպէրդ արժանա-
ցաւ իշխանուհւոյն համակրանաց : Երկուքն
ալ փոխադարձաբար հաճոյ էին միմեանց .
երկուստարեւ՝ փայլուն ու թովիչ յատկու-
թեանց տէր , արդարաւորով եւ ուղղամիտ
միանգամայն , եւ մանկամարդ աղջկին՝ ար-
դէն ծանրախոհ , խարտիպագեղ ու վարդա-
գեղ , որ հասկցած էր թէ այդ իշխան բա-
րեւալատ բնաւորութիւն մ'եւ խոր հմտու-
թիւն մ'ունէր որոց կը միանային նուազա-
ծուի ճշմարիտ տաղանդ մ'եւ մտային սի-
րելի յատկութիւններ : Առնցմէ զատ , Ալ-
պէրդ իշխանն իւր ժամանակին գեղեցկա-
գոյն երկտասարդաց մին էր , որ անհաճոյ
բան մը չէ :

Վիքորիա իշխանուհին կը սիրէր եւ կը
սիրուէր փոխադարձաբար : Այսպէս սկսաւ
այդ երկու սրտերու հակումն որ երեք տա-
րի յետոյ պիտի յանգէր ամենէն բարեբա-
ստիկ ամուսնութեան զոր Աստուած օրհնած
է երկրիս վրայ :

1857 յուլիս 21ին էր , Սէնդ-Ճէյմսի
պալատան մէջ , Վիքորիա իշխանուհին
Մեծին-Բրիտանիոյ եւ Իռլանտայի Թագուհի
հռչակեցաւ ի բովիւն թնդ անօթի հարուած-
ներու եւ ժողովրդեան եռանդազին ցըն-
ծութեամբ : Երկտասարդ վեհապետուհւոյն
համեմատութիւնն , իւր հրամանաց ճշգրտու-
թիւնն , հաստատակամ բնաւորութիւնն ու
շնորհալի վարքը վաղեմի դիւանագէտներն
ու զինուորականներն յանկուցին : Արէվիլ ,
Պրուկէմ , Մէլլուրն , Վէլինկըն եւ բա-
ղում այլք ըմբռնեցին . նոյն հետայն թէ
այդ մատաղատի Թագուհին երկաթեայ կամ-
քի մը տէր էր որով ալ տքէր համակեր-
պիլ յարատեւ աշխատութեամբ եւ պար-
տուց խղճահար կատարմամբ : Բրիտանական
դահմանադրութիւնը լաւ ձեռաց մէջ ան-
ցած էր :

Արդէն , Վիքորիա Թագուհին իրեն

խորհրդական ունէր իւր մօրեղբայրը , Պել-
ճիոյ Լէոօլտ Թագաւորն , որուն կորովա-
մտութիւնն ու փորձառութիւնը մեծապէս
գիւրացուցին նմա՝ իւր ազատութեան նա-
խանձախոյր ժողովուրդ մը կառավարելու
գծուարին գործը :

Նախ , յայտնեց իւր նախարարաց թէ չը
պիտի ստորագրէ ո՛ր եւ է պաշտօնագիր
առանց անոր պարունակութեան տեղեկա-
նալու . այս յայտարարութիւն խորին յու-
զում պատճառեց լորտ Մէլլուրնի որ սա-
կայն համակերպեցաւ այնմ : 1858 յուլիս
28ի շարժումէն քանի մ'օր վերջը կրկին
տագնապ մը ծագեցաւ խորհրդարանին ու
պալատան մէջ : Նախարարութիւնն հրա-
ժարական տուաւ . Թագուհին չուզեց բաժ-
նուիլ իւր վարժուած անձերէն եւ նոր
նախարարք մերժեցին իրենց պաշտօնի
գլուխն անցնիլ : Թագուհին՝ քանի մ'ա-
ւուր ընդդիմութենէ յետոյ , ըմբռն-
եց հուսկ ուրեմն թէ սահմանադրապէս
հարկ է տեղի տալ : Ուստի եւ այնպէս ը-
րաւ , ո՛չ սակայն առանց խորին վիշտ ար-
տայայտելու եւ համոզուելով թէ պարտա-
ւոր էր համակերպիլ երկրին աւանդու-
թեանց :

Իւր իշխանութեան սկզբնաւորութիւնը
կարծուածին չափ խաղաղ չեղաւ : Նախ ,
մէջտեղը կար այրի Թագուհին Ատեւայիտ ,
որ հաշտ աչօք չէր դիտեր այն մոռա-
ցումն յոր կը մատնուէր . Քըմպրլէն-
տի դուքսն , ի վերջոյ Թագաւոր Հանօվրի ,
որ մեքենայութիւններ կը նիւթէր , առանց
իրեն վայել համակամութիւն մը ցոյց տա-
լու : Գալով Քէմպրլէնի դուքսին , սա քիչ մը
կը հայհոյէր , բայց ընդդիմութիւն չէր յա-
րուցաներ . յայտնի է թէ դուքսն իբր քաջ
զինուոր եւ խղճահար կառավարիչ , բանա-
կին հրամանատար անուանուելով , Ն . Վե-
հափառութեան հաւատարիմ աշխատակ-
ցաց մին եղաւ այն գծուարին գործոյն մէջ
զոր ունէր կատարելիք :

Վերջապէս կար նաեւ Քէնդի դուքս-
հին որ առջած մնացած էր տեսնելով՝ որ
իրեն ալ երկրորդական կարեւորութիւն մը
կընծայէին Անձնատիրութեան ներքին դի-
րադածութիւններ էին այս ամենն եւ Թա-
գուհին իւր բոլոր խելքով ու իւր ջախջա-
խիչ գերին համար ունեցած յարմարու-
թեամբ՝ չյամեցաւ յաղթական ելնել :

Այս միջոցին , Ալպէրդ իշխանը բոլորո-
վին շուարած եւ չգիտնալով թէ արդեօք
յարատեւելո՞ւ էր Անգլիոյ Թագուհին կը-
նութեան առնչու յուսոյն մէջ , մէկ կողմ
քաջուած կը մնար : Իսկ Վիքորիա այնպէս
չէր մտածեր . նամակներ գրած է առ Լէո-
բոլտ Թագաւորն եւ առ Պառոն Սքոթլէր ,
որք ցոյց կուտան թէ յիմարաբար կը սիրէր
երկտասարդ իշխանն . ուստի , երբ սա իւր
էռնէստ եղբօր հետ Անգլիա վերադար-
ձաւ (1859ին) , Թագուհին արիական որո-
շում մը տուաւ , զայն ամուսնութեան խնդ-
րելով , վասն զի երկտասարդը չէր համար-
ձակեր վախճալով որ մի՛ գուցէ թաքուն
նպատակներ վերագրեն իրեն : Եւ այսպէս
ամուսնութեան խոստում տուին միմեանց ,
Վինտսորի այդ հինաւուրց դղիկին մէջ , ի
անգլիական միապետութեան յիշատակնե-
րով . հաւատարմութեան երդումն ըրին ,
Թագուհին յանձնեաւ երջանիկ եւ իշխանն՝
երախտապարտ ու եւս առաւել սիրահար-
ուած : Լորտ Մէլլուրն , նախարարապետ էր
այդ թուականին : Թագուհին բնաւ խօսք
մը չէր բացած անոր , այլ իւր թղթեր ամեն
ինչ կը յայտնէին եւ 1840 փետրուար 10

ին , Սէնդ - Ճէյնի պալատան մէջ , Քէնդըրըրի արքեպիսկոպոսն ամուսնական կապերով միացուց Ալպէրդն ու Վիք-դորիան : Փոխադարձ շահերու վրայ հիմնեալ կամ զուտ քաղաքական պատշաճութիւններէ առաջ եկած ամուսնութիւն մը չէր այս , որ սիրտն անտարբեր կը թողու բողոքովին , այլ սքանչելի արարողութիւն մը , որ յորում սիրտստենչ աղջիկ մը , որ Մեծին - Բրիտանիոյ եւ Իռլանտայի գահուն վրայ կը գտնուէր , կ'ամուսնանար Գերմանիոյ տիրող գերդաստանին մէկ իշխանին հետ եւ կը խոստանար ռաբել , պատուել զնա եւ հնազանդիլ նմա , Եւրոպիոյ ամենէն տգնուապետական եւ պերճ դասուն առջեւ , ի ներկայութեան Անգլիոյ համայն երեւելի անձնաւորութեանց , ի ձայն զանգակաց որք կը թնդային որոտագին եւ ի ձայն բիւրաւոր կեցցէներու ամբողջ ժողովրդեան մը :

Գուցէ տէր մը չէր գոր կ'աւնուր Վիք-դորիա Քաղուհին , բայց կ'աւնուր ամուսին մը որ իրեն հետ պիտի բաժնէր ամեն ցեծութիւն եւ տառապանք , թագին ամեն պատասխանատուութիւնները :

Ալպէրդ իշխանն ի կենդանութեան իւրում ըստ բաւականին չգնահատուեցաւ երբէք հանրութեան կողմէ : Յոյժ մտաւրել էր իւր կացութիւնն : Ինքնապէս պիտի ներդուէր անտարակոյս , եթէ թագուհին դիւրութիւն չընծայեր նմա լուսթեամբ մոռնալ ոմանց չարակամութիւններն եւ այլոց սխալութիւնները : Պալատան մէջ ամեն ոք , եւ նոյն իսկ Լէյպ-զէն պառնուհին որ Ն. Վեհափառութեան խնամակալն եղած էր երբեմն , խուլ լինա-մութիւն մը կը տածէին Ալպէրդ իշխանին նկատմամբ : Մտերիմ խորհրդատու մը միայն կրնար լինիլ եւ ամեն ոք գոյն կը լրտեսէր , թերութիւն մը գտնելու համար , եթէ դիպուածաւ անցնէր նա այն անորոշ սահմանը զոր Սահմանադրութիւնը գծած էր : Եւ ահա այս խորհրդականի , անխոնջ աշխատանքի դերն էր զոր կատարեց ամենայն գովեստից արժանի եւսողեամբ մը , նուիրելով հանդերձ իւր կնոջ ամենա-ջերմ գորով մը եւ անձնուէր զգացումներ : Լէյքուտ թագաւորը , Պաուս Սգոքմէր եւ Վէլինկլենի դուքսն իրենց բոլոր փորձա-նութեամբ կ'օգնէին երիտասարդ ամուսին : Օրինակելի վարմունք մը , տէրութեան գործոց խորին հմտութիւն , արքայական հա-րըստութեան իմաստուն կերպով գործա-ծութիւնն , եւ ապա , ընտանի յարկին քաղ-ցըր զբօսանքները , գրականութիւն , նուա-գածութիւնը , երգչոնի հեշտալուր դաշ-նակութիւնը , մտացի իրերու ճաշակ մը , կէս դեղձկական , կէս արհեստական կեանք մը՝ արքունական պերճանաց շուքին մէջ տեղ եւ այդ պալատան մէջ առանին կեանք մը , որ իւր հրապոյրներով իսկ կը մեղմէր իշխանութեան ծանրութիւններն : ահա ի՞նչ որ Ալպէրդ իշխանը նուիրեց , ինչ որ տուաւ , ինչ որ գիտցաւ աղնու-րէն պահել հանդէպ իւր կնոջ եւ թագա-ւորութեան :

Ահ , ի՞նչ երանութիւն այդ թագուհ-ւոյն համար եւ ի՞նչ դրախտ այլ նաեւ ի՞նչ աղէտ եւ ի՞նչ մահու զօղանջ : Որքան ճշ-մարիտ է ըսել մեզ ամենուս համար , ցոր-չափ կ'ապրինք , թէ երջանկութիւնը վա-զանցուկ դադար մ'է լոկ եւ թէ ալէլու-եայք յաճախ ոչ այլ ինչ են բայց եթէ հո-գեհանգստեան երգի մը նախաբանը :

(Մնացեալն յաջորդ խոսքով)

ԲԻԻԶԱՆԴԻՈՆ ԵՒ Կ. ՊՈԼԻՍ

Դիցարանական տւանդութիւն եւ պատմական տեղեկութիւն «Բիւզանդիոն»ի ծագման մասին . — Բիւզանդիոնի պատմական վիճակն մինչեւ 315 թուա-կանն Բերստոսէ յետոյ . — Բիւզանդիոն-Կոստանդնու-պոլիս եւ մայրաքաղաքը հռոմէական կայսրութեան :

Ա.

Գրիստոսէ մի քանի դար առաջ այն տեղն , ուր է այժմ Կ. Պոլիս , եկաւ հաս-տատուեցաւ բիւզանդական գաղթական-նութիւնը : Սորա հիմնադիրն եղած է Բիւ-զանդ անուն անձ մը , որպէս կ'ապացու-ցանեն հին բիւզանդական գրամներն , ո-րոց վրայ քանդակուած կը տեսնուի այդ հիմնադիր հերոսի պատկերն , սաղաւարտա-կիր , զրահապատ կուրծքով ու թեւերով : Աւանդութիւնը կ'ըսէ թէ Բիւզանդ ծովային աստուծոյ Պոսիդոնի եւ Արամադէ ու Իօ¹⁾ է ծնեալ Կերոյես²⁾ յաւերժահարսի որդին էր : Բիւզանդ անունն ստացաւ իւր Բիւզիոն³⁾ անունէն : Կը պատմեն թէ , մի օր երբ նա ցուլ մը զոհ կը մատուցանէր , վերէն վար սրացաւ արծիւ մը , յափշտակեց զոհաբեր կենդանիի սիրտն եւ տարաւ Բոս-փորի մէջ ցցուած Փրակիոյ հրուանդանն , որ կը գտնուէր Խրիստոպոլսոյ կամ որ նոյնն է արդի Սիլւատրի հանդէպ : Բիւզանդ ըն-դունելով այս երեւոյթն իբր աստուածային հրաման , այն տեղի վրայ կառոյց քաղաք մ'որ այս օտովիւ կոչուեցաւ Բիւզանդիոն , այսինքն քաղաք բիւզանդականաց :

Իսկ պատմաբանները — Հերոդոտ , Եւ-գեթիոս եւ այլք — կ'ըսեն թէ Բիւզանդ Սրգիսացոց կամ Մեգարացոց զօրավարն այդ տեղ բերաւ իւր հայրենակիցներն եւ 657 տարի Գրիստոսէ առաջ հիմնեց գաղ-թականութիւն մ'որի մասին պատգամա-լսուն ըրաւ հետեւեալ մարդարէութիւնն .

«Երջանկաւս եւ նոքա , որ պիտի բնա-կին այն սուրբ քաղաքն
«Որ կը գտնուի թրակիոյ հրուանդանի վրայ , ամենուրեք չըջապատեալ ջուրով ,
«Պոստոսի բերանի մօտ ,
«Որ առատ եւ ձուկներն եւ եղջերուք :
Սոյն մարդարէութիւն ապագայ քաղաքի շինութեան վայրը կը նշանակէ Կիդար եւ Բորբիս գետոց բերաններու մօտ , ուր մաս-նաւորապէս առատ էին եղջերուներ , իսկ ջրային կենդանիներէն՝ առաւելագոյն գել-փին : Բիւզանդ իւր մարդոց հետ նախ եւ առաջ հաստատուեցաւ այդ տեղ : Սակայն քաղաքի հիմնադրութեան առթիւ ըրած զոհաբերութեան միջոցին սրացաւ ուրուրն եւ յափշտակելով զոհաբեր կենդանիի մի մասն տարաւ զայն Բոսփորեան հրուանդա-նը , Հովիւ մը օգտուեց Բիւզանդին թէ ինք բլուրի վրայ կեցած տեսաւ ուրուրն , որ զոհը բռնած կտուցով եկաւ եւ իջաւ այդ հրուանդանի վրայ : Այս պատճառաւ յիշ-եալ բլուրը կոչուեցաւ Հովիւի բլուր :

1) Իօ բառն յունական հին բարբառով մը , այն է Արգիսացոց լեզուով կը նշանակէ լուսին : Ահա եւ այս պատճառաւ բիւզանդական հին գրամներու վը-րայ քանդակեալ կը տեսնուի կիսալուսինն մէջ տեղն աստեղով . եւ այս մի եւ նոյն պատճառաւ Օսմանցիք եւս «Լիթ» պատահաբար այլ հետեւողութեամբ ի-րենց թագաւորութեան խորհրդանշան ընտրեցին կի-սալուսինը մէջ տեղն աստեղով , զոր կ'անուանենք մահիկ :

2) Կերոյես կը նշանակէ եղջերու , եղջերա-նման , յունական «կերաս»-եղջեր-բառէն . ասկից եւ Կ. Պոլսոյ ծովախորշն ստացած է Ոսկեղջեր անունը :

3) Վիւզիոն յունարէն կը նշանակէ ստինք :

Փոքր ինչ այլապէս կ'աւանդեն Բիւզան-դիոնի կառուցման հանգամանքներն Կոստա-նու եւ այլ մատենագիրներ , ոչնչելով թէ պատգամալսօսի մարդարէութիւնը ցոյց տը-ւաւ բիւզանդականներուն ճիշդեց գաղթա-կանութիւնն հաստատել Կոստանու հանդէպ : պատգամալսօսը Կոստ կ'անուանէ ի Քաղկե-դոն գաղթող Մեգարացիներն , որ շնչմա-րելով եւ չճանաչելով Բիւզանդիոնի դիրքը չքեղութիւնն եւ բնական առաւելութիւնն գնացած եւ իրենց գաղթավայր ընտրած էին ամենալատ տեղ մը Բիւզանդիոնի հա-նդէպ , ասիական եղբարց վրայ : Այսպէս թէ այնպէս միայն այսքան աւելի վճռողաբար կարելի է ըսել թէ Բիւզանդիոնի առաջին բնակիչներն եղած են Յունաց Գորիակոն-ցեղի ծագումէն . եւ այս մասին կը վկայի ոչ թէ միայն պատմաբաններն այլ եւ Բի-զանդացոց լեզուի դորիական բարբառ վերաբերին :

Հիմնուելով աւանդութեանց եւ պատ-մաբաններուն հատուկոր տեղեկութեան վրայ , պէտք է ըստ ամենայն հաւանա-կանութեան ենթադրել , թէ ու է յանդու-ծովագնաց մը , զոր եւ դիցարանութիւն կ'անուանէ Պաթրոնի «բոթի» , թերեւ Արգոնաւորդներէն մին , ոսկեգեղով վերադարձի հիանալով Բոսփորի սքանչելի տեսարանով մանաւանդ արդի Սարայ-Պուրնուի զմայե-լի դիրքով , իւր ընկերաց հետ միասին ին- այդ տեղ եւ հիմնադրեց այն ապագային գաղթականութիւնն , որ այլ եւ այլ ժա-նակ կը կազմէր յունական զանազան ցեղ-րու սեփականութիւն :

Բիւզանդիոնի նորահաստատ գաղթ-վայրն , շնորհիւ իւր գեղազմայլ դիրքի , ծաղկեցաւ արագօրէն : Բաղնիսթիւ թէ-եաց մանաւանդ թրակացոց յաճախ-յարձակմանց պատճառաւ Բիւզանդիոնը զապառուեցաւ անառիկ պարիսպներով , Երեսրիս քաղաքի Սիբիլայից մարդարէ-ութեանց մէջ կ'անուանին ասպատակեալ պարիսպներ : Այս աստուածակերտ պարիս-պներու մնացորդը կարելի է տեսնել եւ այ-ժմ Արքիանուպոլսոյ երկաթուղոյ գծի մօտ , Սարայ-Պուրնուէն սկսեալ Լէնի-գառն եւ աւելի հեռուն , Մարմարայի եղբրի եր-կայնութեամբ : Իրաւ է որ Բիւզանդիոն իւր բնական գեղեցիկ դիրքի եւ այլ բա-րեբաւստիկ հանգամանքներու պատճառա-ւ շարժելով թշնամեաց նախանձն , առիթ կուտար յարձակմանց ու ծանրածանր հար-ուածներ կը կրէր . սակայն ոչ նուազ ան-գամներ եւս ինքն այլ եւ այլ ժամանակ ե-ղած է մեծազօր իշխող , տուրք հաւաքելով Փոքր Ասիոյ գաւառներէն , զորօրինակ Բիւ-թանիայէն , Փոլիգլայէն եւ : Բիւզանդիոն երբեմն բաղնած է իրմէ անհամեմատ հը-րազոյն թշնամեաց հետ . այսպէս Պարթի-կետ Դարեհ թագաւորի արշաւանքի ժա-մանակ Սկիւթացոց վրայ , յորժամ Փիւնի-կեցիք այրեցին թէ՛ Բիւզանդիոնն եւ թէ՛ Քաղկեդոնը : Աթենացիք եւ Լակեդեմոնացիք նմանապէս շատ անգամ Բիւզանդիոնը դարձուցին ներքին պատերազմներու թատ-րոյ մը : Այսպէս ի մէջ այլոց 477 թուին Գրիս-տոսէ առաջ , Գոթթալիսի Յունաստանի մէջ յաղթուեցին յետոյ Սպարտացի զօրավար մը պաշարեց զԲիւզանդիոն եւ նուաճելով զայն ենթարկեց Լակեդեմոնացոց իշխանու-թեան : Աղկէ Եօթն տարի յետոյ Աթենացի-թրասիլոս զօրավարն վաճառելով Լակեդե-մոնացի իշխողներն , քաղաքն յանձնեց Ա-թենացոց իշխանութեան : Պեղոպոնեսեան պատերազմի ժամանակ Բիւզանդացիք վե-

ընտանիքն ենթարկեցան Լակեդեմոնացւոց իշխանութեան, որ հաստատեցին նոցա համար մասնաւոր կառավարութիւն մը ոյր պետը կ'անուանուէր Արքայ, այսինքն տեղակալ կամ փոխարքայ: Վերջին Արքայն, այն է Կլէարդոսի ժամանակ, Աթենացիք Արկի-րիադէս զօրավարի առաջնորդութեամբ 409-410 թուին Քրիստոսէ առաջ, դարձեալ գրաւեցին զԲիւզանդիոն: Կլէարդոս արքայ-րանքի դատաւարաւորեցաւ ու երեք նա-ւերով երթալով Լաւրասկոն քաղաքն կեցաւ այնտեղ առ ժամանակ: Իսկ երբ Բիւզանդացիք ա'լ չկարողացան դիմանալ Թրակացւոց, իրենց օգնութեան կոչեցին Կլէարդոսն: Այն ժամանակ նա օգուտ քաղելով այս բարեպաշտէ հանգամանքէն եկաւ եւ բոլորովին տիրեց Բիւզանդիոնի ու դար-ձաւ նորա լիազօր բռնակալը:

Այնուհետեւ Բիւզանդիոնի համար հա-սաւ երկարատեւ ազատութեան եւ ուս-կավարական ինքնավարութեան դարեւոր-ջանն: Բիւզանդիոն ունէր իւր մասնաւոր կառավարիչներն, որոց զլսաւարը կ'ան-ուանուէր Արքայ, իւր պաշտօնով համա-ւասար Հռոմէացւոց Pontifex Maximusին:

357ին երբ Բիւզանդացիք Մակեդո-նացւոց գաղանկից լինելով հանդերձ, չու-զեցին մասնակցիլ Մակեդոնացւոց Փիլիպ-պոս թագաւորին եւ Աթենացւոց միջեւ տե-ղի ունեցող պատերազմին, պատերազմէն յետոյ Փիլիպպոս թագաւորը պաշարեց զԲիւզանդիոն, նախապէս աւերելով հա-մայն չըմկայքն: Աթենացիք 120 նաւ զըր-կեցին Բիւզանդացւոց օգնութեան հրամա-նատարութեամբ Քարիառ քաղաքէն, որոյ Գամալիոն կոչի ի պատիւ (Գամալիոն կը նշանակէ ցաւ, նմանապէս աղջիկ) Բիւզան-դացիք Քրիստոստոյն — Սկիւտարի — նաւա-հանգստի մէջ կառուցին քարէ ցուլ մը որմէ եւ թուրքերն Սկիւտարի նաւահանգիստը կ'անուանեն Էօփէս Իֆանը, իսկ մերձակայ ամրութիւնը (դարձեալ ի պատիւ Գամալի-ոսի հաստատուած) Գըլ Գուլփէ: Սոյն պա-տերազմի մէջ նշանաւոր հանդիսացաւ Բիւ-զանդացի հրամանատար մը որ Պապադոսի ա-չակերան էր:

Պապադոսի ժամանակ Բիւզանդացիք վայելեցին կատարեալ երջանկութիւն, այն-պէս որ Պապադոս Եղբայրասիրին ի պատիւ նոցա կառուցին տաճար մը եւ իբր աստ-ուած սխան պաշտել զնա:

Պապադոսի իշխանութենէն յետոյ Բիւ-զանդիոն եւս, նման յունական միւս բոլոր քաղաքաց, ընկաւ հռոմէական իշխա-նութեան ներքեւ, եւ մասնաւոր իշխան-ներով սկսաւ կառավարուիլ: Գրամ-ները կը կոչուէին հռոմէական կայսերաց հրամանաւ: Սակայն Բիւզանդացւոց յարա-տեւ խռովութիւններու վրայ զայրացած, Վեսպասիանոս կայսրը բոլորովին ջնջեց նո-ցա ազատութիւնը: Քիչ ժամանակէն յետոյ Բիւզանդիոն վերստացաւ իւր անկախու-թիւն, զոր վայելեց մինչեւ Սեպտիմիանոս Սեվերիանոս կայսեր օրերն (146-211) Այս միջոցին գծուած էին պատճառաւ Սե-վերիանոս իւր համայն ոյժն ուղղեց Բիւ-զանդացւոց վրայ, պաշարեց քաղաքն (196-197), և ետամայ պաշարումէն յետոյ դա-ւաճանութեամբ առաւ քաղաքն, ոչնչացուց բոլոր առանձնաշնորհումները, քանդեց պա-րիսպները, կործանեց հասարակաց լաւա-գոյն շէնքերն եւ Բիւզանդիոնն յանձնեց նորա օրերիմ թնամեաց ձեռքը: Պաշա-րումէն եօթն տարի յետոյ Սեվերիանոս վերանորոգեց քաղաքը, շինելով բազմաթիւ

նոր հաստատութիւններ եւ իւր վերանորո-գած քաղաքն անուանեց Antonina Byzan- tiorum Augusta ի պատիւ իւր Անտոնի- նոս որդւոյն, ոյր մահու ընէ յետոյ Anto- nina Byzantiorum: Դարձեալ սկսաւ ան- ուանիլ պարզապէս Բիւզանդիոն: Գաղիանոս Գ. կայսեր օրով (260-268 Քրիստոստոյ) Բիւ- զանդիոն պատերազմի բռնուելով բոլորովին կործանեցաւ հռոմէական զօրաց ձեռքով: Երկու բիւզանդացիներ ապա վերանորոգե- ցին քաղաքն ընդ միշտ արժանանալով ի- իրենց հայրենակցաց երախտագիտութեան: Վերջապէս հասաւ այն դարեւրջնան, յորում վիճակուած էր Բիւզանդիոնի լինիլ կենտրոն նորագոյն քաղաքակրթութեան:

Բ.

Անտանդիանոս Բ. կայսրն Լիկիոնիոսի յաղ- թելէ յետոյ, 315ին, երբ այլ եւս հռոմէա- կան լայնածաւալ կայսրութեան միահեծան տէրն եղաւ, իւր մայրաքաղաքն արեւմուտ- քէն փոխադրեց արեւելք, որովհետեւ Հռո- մի մէջ տեղի ունեցող յարատեւ երկպառա- կութիւններն ու բարբարոսութիւններն ա- տելի ըրած էին այդ քաղաքը: Թէեւ քաղ- մաթիւն այլ պատճառներ կը վերագրուի Աոս- տանդիանոսի իւր փոխումն ի Բիւզանդիոն փոխադրելուն, սակայն հաւանական պատ- ճառն հետեւեալն է: Աոստանդիանոս պատերազմ ունենալով Լիկիոնիոսի դէմ, մի անգամ պարտաւոր էր պաշարել Բիւզան- դիոնն: Այս միջոցին առիթ ունեցաւ ուշի ուշով ի նկատ առնուլ քաղաքի ընդհանուր դիրքն: Այս ժամանակէն սկսեալ Աոստան- դիանոս որոշեց իւր փոխումն իւր քաղաքն ընել զայն: Քաղաքի հաստատութիւնն սկը- ոած է 325ին: Այնուհետեւ քաղաքն ան- ուանեցաւ Աոստանդուպոլիս, կամ Նոր Հռոմ եւ կամ Alma Roma (Կենսատու Հը- ոսմ): Ի յիշատակ նորահաստատ քաղաքի հիմնարկութեան, Աոստանդիանոս զրամ կոխել տուաւ մի կողմի վրայ բանդակուած իւր կրօնաբանն եւ գրեւծ Constantino- polis, իսկ միւս կողմի վրայ՝ նստած կին մը աջ ձեռին ունենալով եղջիւր առատութեան իսկ ձախին՝ Victoria Aug վերտառու- թիւնն: Այնուհետեւ Աոստանդիանոս մին- չեւ իւր մահն անդադար աշխատեցաւ քա- ղաքի բարգաւաճման եւ ճոխութեան. գա- ղափար մը տալու համար թէ Աոստանդիա- նոս որչափ անհուն դրամ ծախսած է քա- ղաքի կառուցման համար, կը բաւէ ըսել թէ լոկ պարիսպներու եւ ջրանցքներու հա- մար ծախսած է չափը 2,500,000 օսմ: ոս- կի: Աոստանդիանոս, այս աստիճանով ամեն տե- սակ հարկերէ ազատ հրատարակեց ճարտա- րապետներն, որմնադիրները, քարտաշները, նկարիչներն եւ առհասարակ այն բոլոր ար- հեստաւորներն որ կը մասնակցէին ընդ- հանրապէս շէնքերու կառուցման գործերուն: Բաց աստի, օրինաց մի այլ արամադրու- թեամբ, Սեւ ծովու եզերաց վրայ եւ Ա- սիոյ մէջ անշարժ կալուածք ունեցող իւ- րաքանչիւր անձ պարտաւոր էր առնուազն մի տուն ունենալ Կ. Պոլսոյ մէջ. հակառակ պարագային օրինադանք մարդոց ժառան- գութեան վերաբերեալ կտակները կը կո- ռուանէին իրենց օրինական նշանակու- թիւնը:

Նոր Հռոմի ազգաբնակչութիւնը բազ- մապատկելու համար Աոստանդիանոս ամեն հնարք ի գործ կը դնէր յինքն գրաւել եւ գաղթել տալ կայսրութեան զանազան գա-

ւառաց եւ նոյն իսկ Հին Հռոմի բնակիչ- ներն, տալով գաղթողներուն ամեն տեսակ դիւրութիւն եւ առանձնաշնորհում: Հռո- մէն Կ. Պոլիս սկսան գաղթել ամենանշա- նաւոր գերգաստաններն եւ հոչակաւոր մարդիկ: Բիւզանդական մատենագիրներէ ոմանք բաւական հետաքրքրական պարա- գայ մը կը պատմեն այս մասին. կը պատ- մեն թէ Աոստանդիանոս Հին Հռոմի մեծա- մեծներն իւր մօտ կանչելով կը զրկէ Պարսից վրայ արշաւանքի, նախապէս ժո- ղովելով նոցա ամենուն մատանիները: Նոցա մեկնեցին անմիջապէս յետոյ նման կը գրէ նոցա ընտանեաց և իւրաքանչիւրի նամակը կ'ընկելով իւր տան մեծի կնիքով (հին ժամա- նակ կնիքն ստորագրութեան տեղ կը ծա- ռայէր) եւ կը հրաւիրէ ամենը գալ բնա- կիլ ի Կ. Պոլիս: Ապա, իսկոյն հրամայեց կա- ուցանել նոցա իւրաքանչիւրի համար տու- ներ կէտ առ կէտ նման նոցա Հռոմի տու- ներուն: Այս նորակառուց տուներու մէջ բնակեցուց նոցա Հռոմէն եկած ընտանիք- ները: Մեծամեծներն արշաւանքէն վերա- դարձին ի Կ. Պոլիս իւրաքանչիւրի ինքզինքը գաւաւ կարծես իւր Հռոմի տան մէջ: Աոս- տանդիանոս իւր մայրաքաղաքի գաղթակա- նաց սիրտը գրաւելու նպատակաւ նոցա համար նշանակեց մասնաւոր նպաստներ. այսպէս պետական գանձը կ'օգտար նոցա հաց, իւղ, գինի, վառելիք եւ տնային ա- մեն պիտոյք: Այս նպատակը կ'օգտար Գ. Պոլի- քէսին, որ տեւեց աւելի քան 300 տարի: Հերակլ կայսրն 635 թուին ոչնչացուց Կէփ- քէսին:

Աոստանդիանոս ոչ նուազ նախան- ձայնաւորութեամբ հոգ տարաւ Նոր-Հռոմի տաճարներու արտաքին եւ ներքին ճոխու- թեան: Ժամանակակից բոլոր երեւելի քա- ղաքներէն՝ Աթէնքէն, Կորնթոսէն, Եփե- սոսէն, Անտիոքէն եւ այլ տեղերէ Կ. Պոլիս բերել տուաւ այն անգին եւ չքեղ իրեղէն- ներն որոցմով զարդարուած էին հելլենիս- կան տաճարներն եւ որ կը կազմէին նոցա համաշխարհային փառքը: Աոստանդիանոսի նոյն կարգադրութիւնը բաւական մեծ դժ- դոհութիւն պատճառեց այլ եւ այլ գաւա- ռաց. եւ Յուլիանոս կայսրն 363ին հրատա- րակեց օրէնք մ'որով կ'արգիլէր սիւններու արձաններու փոխադրութիւնն մի գաւառէ այլ գաւառ եւ մինչեւ իսկ տեղէն շարժելն: Հակառակ սոյն օրինաց բիւզանդական յաջորդ կայսրներն, մանաւանդ Յուստի- նիանոս, 250 տարուան ընթացքի մէջ շա- րունակեցին զարդարուն առարկայներն փո- խադրել իրենց պալատներն: Այսպէս ի մէջ այլոց Աոստանդիոն Գ., Հերակլի թոռը, 635ին Հռոմէն Կ. Պոլիս փոխադրեց բոլոր մարմարիոնէ եւ պղնձէ սիւններն, որ կը զարդարէին Հռոմի տաճարներն եւ հրա- պարակներն: Այս բազմաթիւ երկրաց գե- ղարուեստական գործերն բերուելով Կ. Պո- լիս կը կազմէին անկապարար տեսարան: Այս ընդհանուր խառնուրդէն երեւան եկաւ ճարտարարուեստի այն բազմանկարագիր տիպարն, որ յայտնի է Բիւզանդական ոճ-ան- ուամբ:

Ըստ Ժամանակակից ժողովրդական նա- խապաշարման, իւրաքանչիւր քաղաք ունէր իւր օպաշտպան ոգիներն (publicos genios). Աոստանդիանոս, քաղաքի վերանորոգու- թենէն չորս օր յետոյ, իւր մօտ կը կանչէ Վաղենտ աստղագէտն հրամայելով նմա որ աստեղաց զօրութեամբ գուշակէ իւր մայրաքաղաքի ապագայ ճակատագիրն: Եւ նա յայտարարեց թէ քաղաքը գոյու- թիւն պիտի ունենայ 696 տարի այսինքն մինչեւ 1026 թուականն, որ ճիշդ չեղաւ: Կ. Պոլիս որպէս յայտնի է ընկաւ 1453ին: Սակայն Զոնարոս մեծանուն յոյն պատմա- գիրն ոյգ խնդրի մասին բաւական սրամը- տութեամբ զիտել կուտայ թէ Վաղենտ գուշակած էր որ Կ. Պոլիս պիտի շա- րունակէ գոյութիւն ունենալ 699 տարի օրինաւոր թագաւորաց իշխանութեան ներ- քեւ եւ ոչ թէ ինքնակոչ: Կ. Պոլսոյ գոյու- թեան մասին կան եւ ուրիշ շատ գուշակու- թիւններ զորս աւելորդ է յառաջ բերել աստ:

Պ. Տ.

Է Ֆ Ե Ն Տ Ի Ն

(ՆՈՐԱՎԵՊ)

Ա.

188... Թուականին տաժանելի հիւանդութեամբ մը կը տանջուէր Սիմօն աղա. մի քանի տարիներ յառաջ կորուսած էր նմանօրինակ հիւանդութեամբ մը իւր սիրելի կիներն. իբր վերջին միտքարութիւնն ու միակ յոյս մնացած էր իրեն Ջապէլն, սիրուն ու գեղանի մի կոյս զոր անշարի կը սիրէր եւ որոյ լաւ դաստիարակութեան մեծ հոգ ու խնամք կը տանէր:

Ջապէլ այն ատեն 15 տարեկան, անմեղութեան ու անբծութեան տիպար մը, փափկասուն վարդ մը, ամէնուն հաճելի ու սիրելի կը մեծնար տակաւ առ տակաւ եւ մէկ կողմէն բնածին ազնուութիւնն, միւս կողմէն լաւ դաստիարակութեամբ ձեռք բերած կրթութիւնն կատարեալ մայր մը լալու կը պատրաստէին զինքն: Սիմօն աղա տեսնելով իւր աղջկին օժտեալ այդ չափ ընտիր բարեմասնութեամբ՝ յանձնարար կը հրաժարէր. կը մոռնար պահ մը իւր բարոյական ու մարմնական ցաւերն որք երկար ամիսներէ ի վեր զինքն անդադար կը տանջէին. յաճախ տխրութեամբ կը յիշէր Ջապէլի մայրն, այդ անմեղ ու ազնիւ կիներն՝ որ իւր կենաց գարնան մէջ հեռացած էր աշխարհէն թողով բարի եւ առաքինի ամուսին մը՝ այրի, եւ ազնիւ ու սիրուն մանկիկ մը՝ որբ:

Ջապէլ իւր միակ միտքարութիւնն էր. 15 տարեկան հասակի մէջ կատարեալ աղջկան մը պէս կը խնամէր հայրն այնչափ սիրով ու հոգատարութեամբ որ կարծես կը ջանար ընել այն մեծ պակասն՝ զոր մայրն թողած էր իւր կանխահաս մահուամբ: Որչափ դժբաղդ պիտի ըլլայի, կ'ըսէր ինքնիրեն Սիմօն աղա, եթէ չունենայի Ջապէլն եւ որչափ դառնութեամբ պիտի սահէին այս ժամերն՝ եթէ իւր սիրալիր ու միտքարական ժպտումը չբազմացնէր զայնս:

Այդ տարւոյ վերջերն Սիմօն աղայի հիւանդութիւնն սկսած էր ծանրանալ. աշխատիլն այլ եւս չէր կարելի, ճարտար ու ականաւոր բժիշկներ չափած էին իւր կենաց կարճատեւ օրերն. ինքն, կարծես բռնազգամբ, գիտէր թէ պիտի մեռնէր. յաճախ իւր բարեկամաց ու մասնաւորապէս իւր քրոջ խնամոց կը յանձնարարէր իւր միակ զաւակն՝ զոր այնչափ սիրած այլ զոր անգութ ճակատագիրն որոշած էր բաժնել իրմէն. Ջապէլ եւս նշարած էր սպառնացող վտանգն. տխուր էր միշտ բայց ամէն ջանք ի գործ՝ կը դնէր ծածկելու համար այդ տխրութիւնն իւր հօրմէն. հայրը փոխադարձաբար կը ջանար ուրախ եւ զուարթ երեւնալ Ջապէլի. բնաւ չէր պատմեր իւր ցաւերն՝ որք դժբաղդաբար որոշակի դրժուած էին իւր դիմաց վրայ:

Եթէ կ'ուզէր սպիլել Սիմօն աղա, մի միայն Ջապէլի համար էր այն, առանց անոր կեանքն անշուշտ շատ դառն էր. կորուսած էր իւր երկու զաւակներն՝ մին եօթն իսկ միւսն տասն եւ մէկ տարեկան. կորուսած էր իւր կիներն՝ երիտասարդ, բարի ու առաքինի. կորուսած էր երկարատեւ հիւանդութեանց պատճառաւ խնայողութեամբ ժողոված մի քանի ոսկիներն եւ ինչ կը մնար իրեն իբրեւ վերջին միտքարութիւն, եթէ ոչ Ջապէլն. աւա՛ղ, այլ

բիշ ատենէն պիտի կորսնցնէր զայն եւս, թողով օտարներու խնամոց. ա՛հ եթէ կարողացած ըլլար գէթ պատրաստել նորա ապագայն. եթէ կարողացած ըլլար իրականացնել այն յոյսեր զորս տածած էր նորա խանձարութիւնն սկսեալ...

188. մարտ 15ին կը մեռնէր Սիմօն աղա. իւր բեռայրն Պաղտատար աղա, վերջին ծայր ազահ այլ դիւրակեաց վաճառական մը, կը կատարէր յուղարկաւորութեան հանդէսն խիստ անշուք եղանակաւ եւ երբ մէկ կողմէն երկու պանդուխտ քահանաներ ըթերնուն տակէն մուտալով Սիմօն աղայի անշնչացեալ մարմինն ի գերեզման կ'առաջնորդէին, Տիկին Աննա, Ջապէլի հօրաքոյրն, կ'առաջնորդէր զՋապէլ իրենց տունն:

Անկարելի է նկարագրել այն ցաւն զոր կ'զգար Ջապէլ իւր հօր մահուան առթիւ. երեք տարիներ առաջ զրկուած էր այնպիսի առաքինի եւ գորովալից մօր մը խնամքներէ. իւր սիրտը կարի վիրաւոր կ'արիւնէր տակաւին, երբ թշուառ հայրը կ'երթար գրկել իւր սիրելին գերեզմանի մթութեան մէջ. եւ ո՞վ պիտի գրկէր զինքն, ո՞վ պիտի խնամէր զինքն:

Ջապէլ անմեղութեան տիպար, իբր նորաքոյրը ձեռնագեղ շուշան, ծանրածանր դժբաղդութեանց ժանտաբեր շնչովն սկըսած էր թառամիլ անցեալն շատ տխուր էր իրեն համար եւ ապագայն անստոյգ ու մառախլապատ, ուր չէր կարող նշմարել երջանութեան նշոյլ մ'անգամ:

Գիտէր Ջապէլ թէ հօրաքոյրն անտարբեր, գրեթէ անզգայ կին մ'էր. իւր կրած վերջին դժբաղդութենէն ի վեր, այսինքն իւր չորս տարեկան որդեկին մահունէն ի վեր, մոռցած էր իւր ամուսինն, իւր երկու փոքրիկ զաւակներն եւ զաշխարհ համբուն. ո՞րչափ դուրս ու կորով պիտի կարենար ունենալ նորա վրայ երբ անխնամ կը թողուր իւր սրտին վրայ մեծցողացած զաւակներն իսկ. եւ ո՞րչափ կրնար յուսալ Պաղտատար աղայէն. գիտէր թէ հօրուստ մէկն էր, ժանգոտած ոսկիներու տէր, ինչպէս սովոր էին ըսել զինքն ճանչցողներն, այլ գիտէր նաեւ թէ վերջին ծայր ազահ մ'էր, կատարեալ Հարքաիօն մը. եւ ագահութիւնն ու աղքատութիւնն հոմանիշ չէին միմէյ:

Կրնա՞ր մոռնալ թէ իւր որդացեալ հօր ճգնաժամուն մէջ անգամ չէր եկած տեսնել եւ մի քանի սիրտիւն ու քաջալերական խօսքերով միտքարել զայն. կրնա՞ր մոռնալ թէ յետ մահուն ո՞րչափ պատուած էր նորա անշնչացեալ մարմինն եւ ինչ կոչու եղանակաւ զաւակներ չուզէր դու ալ մեր տունը պիտի գասս ըսած էր իրեն:

Անտարակոյս կը պատրաստուէր Ջապէլ կրելու իւր դժբաղդ ճակատագրին ամենածանր հարուածներն. կը մտնէր տանը դռնէն ներս եւ կ'զգար թէ այդ տունն տանջարան մը պիտի ըլլար իրեն համար. հոգատար ու գթաւատ մօր մը, պիտի յաջորդէր անտարբեր ու անզգայ կին մը եւ որդեսէր ու առաքինի հօր մը՝ կոչու ու բիրտ անձնաւորութիւն մը: Ա՛հ, կ'ըսէր արտասուաց հեղեղներ թափելով իւր աչքերէն, ո՞ւր էր թէ այդ պանդուխտ քահանայներ զիս ալ տանէին հօրս հետ հոն՝ ուր սիրեցեալ մայրըս երկու անմեղ հարազատիցս հետ կը հանգչի:

Բ.

Տասն եւ վեց տարեկան հասակի մէջ, Ջապէլ կը մնար որբ, գրեթէ անոք ու

լքեալ. Պաղտատար աղայի տան մէջ կը կատարէր կատարեալ սպասուհոյ մը դերն. հօրաքոյրն անտարբեր կը գիտէր այն տաժանելի աշխատութիւններ զորս կը կատարէր Ջապէլ իւր մատուց հասակի մէջ. իւր փափուկ ու ձիւնափայլ ձեռաց չէր խղճար յանձնել այնպիսի կոչու ու աղտոտ աշխատութիւններ՝ զորս տանը մէջ գտնուող ծառան, Մարտիրոս աղբարն իսկ, պիտի դժկամակէր կատարել:

Պաղտատար աղա այդպէս կը պահանջէր այդպէս կը հրամայէր. հարկ էր հնազանդել նորա հրամանաց լոկի ու մնջիկ եւ առանց արտասուելու. այդչափ անգութ էր:

Իւր ամէն շարժումներն նկատողութեան կ'առնուր. եթէ մի քիչ յստակ խօսէր, անկիրթ ու լիրք ածականներով կը կշտամբէր այդ սիրուն ու անմեղ հրեշտակն. եթէ ցած ձայնով պատասխանէր, այնպէս ինչ ձայնը պայթեցնելով զթիւղ տակէն ինչ մոմաւս կը պուար, որ դժբաղդ Ջապէլն այլայլմէ եղած, աշարեկ հազիւ կը համարձակէր արտասուաց կաթիլներով թանալ իւր ամոթագեղ այտերն:

Հօրաքոյրը չէր խօսեր բնաւ, ոչ մէկ դիտողութիւն կ'ուղղէր իւր ամուսնոյն, սա բացարձակ պատճառաւ թէ սիրտ չունէր. թէ աշխարհ մութ էր իրեն համար եւ թէ Ջապէլ իրմէ շատ հանգիստ ու երջանիկ է եւ աղկէ աւելին պահանջելու իրաւունք մ'ալ չունէր, քանի որ իրեն պէս չորս տարեկան սիրուն դաւակ մը մահուան գիրկն չէր յանձնած...

Ինչպէս գուշակած էր Ջապէլ, հօրաքոյրը տունը կատարեալ տանջարան մ'եղաւ իրեն համար եւ երկար տարիներ, որք գործէր աւելի երկար տեւած էին, անսահեցան թողով այնպիսի տխուր ու սրբաւոր խնայողութեան օրինակներ՝ որոց տակ յիշատակն կարծրացեալ սրտերն իսկ կարող է ի գութ շարժել:

Այն աստիճան ազահ ու կծծի էր Պաղտատար աղա որ թշուառ Ջապէլի կերած չոր հացին անգամ աչք տնկած՝ իւր կնոջ դժգոհութիւն կը յայտնէր անդադար եւ այդ ահագին շայլութեան ու ծախուց պատճառը մէջտեղէն բառնալու ճար մը կը խորհէր:

Որչափ մեծ ծախք, կ'ըսէր, օրը կէս օխայ հաց կ'ուտէ եւ ժամանակիս անձկութեան մէջ կը սոսկար որ աւերիչ կրնար ըլլալ իրեն համար:

Կարգալ կամ գրեւն արգիլուած էր Աղջիկ մը ո՛չ կարգալու եւ ո՛չ գրեւու պէտք ունի, կ'ըսէր, եւ Ջապէլ այդ տանջարանէն ներս մտած օրէն սկսեալ երկու տող կարդալու կամ գրելու ո՛չ ժամանակ եւ ո՛չ թոյլտուութիւն գտած էր:

Իրաւ է որ շատ աղօթաւէր ու եկեղեցասէր էր Պաղտատար աղա, բայց տան տարիներէ ի վեր գրեթէ եւ ո՛չ մի անգամ Մնունդի, Ջատիկի կամ տօնական ուրիշ եւ է օր մը եկեղեցոյ դռնէն ներս մէկը տեսած չէր զինքն. շատ արտունջ կը յայտնէր այդ տօնական օրերու մէջ շրջադայած անհապառ՝ Բապիւնեքա համար. եթէ հարկադրուէր ամէն մէկուն 10 փարայ ձգել, որչափ ահագին դուռ մը կը պակսէր իւր գրպանէն. միմէ շայլութիւնն չէ՞ր եւ չե՞ռայլութիւնն ալ մահացու մեղք:

Միշտ մեծ ցաւ կ'զգար Ջապէլի համար. օրը կէս օխայ հաց կ'ուտէ կ'ըսէր. վայրկեան մ'առաջ լաւ էր հեռացնել այդ աւերիչ տարրն որ իւր քսակին կ'ապառնար. 19-20 տարեկան եղած էր. կրնար ամուս-

Ք Ա Ղ Ո Ւ Ա Ծ

Շ Ա Բ Ա Թ Ա Կ Ա Ն Լ Ի Ռ Յ

1887 Յունիս 20-ին 26

Ա Ր Տ Ա Ք Ի Ն

Պուրկարական խնդիրն համայն Տէրութեանց խորին ուշադրութեան առարկայ է միշտ եւ մանաւանդ այս պահուստիւ իւր ամենէն տաք վիճակին մէջ կը գտնուի, վասն զի մեծ Սոսրանյէն ի նիստ գումարուած է ի Երնովա՝ իշխանի ընտրութիւն կատարելու համար։ Ժողովոյն աշխատութեանց վրայ սա ծանօթ է միայն ցարդ, թէ առաջին նստին մէջ նախագահ ընտրուած է Պ. Թոնչէֆ, փաստաբան ի Փիլիպէ ու Ղեր-նախագահ՝ Պ. Զախարիա Սոսրանով, հրապարակագիր՝ Երկրորդ նստին մէջ, Պ. Պ. Կրէքով, Սոսրանով եւ Քալէֆ՝ Ժողովոյն հաղորդած են իրենց յեւրոպա կատարած պատուիրականութեան արդիւնքը, մանաւոր շնորհակալիք յայտնելով այն սիրայիր հոգածութեան համար զոր վեհ. Սուլթանն եւ իւր նախարարը ցոյց տուած են պուրկարական խնդրոյն ըննութեան եւ կարգադրման համար։ Այս յայտարարութիւն ընդունուելէ քուն ծափահարութեամբ ժողովականաց։

Վերջին պահուն առնուած հեռագիր մը կը ծանուցանէ թէ Սոսրանյէն Պուրկարիոյ իշխան ընտրել է Քալուրի Ֆէրիտին։ Իշխանն որ ծնած է 1861 փետրուար 26ին ի Վիէննա եւ Աւստրիոյ հիւսարներու 11րդ զօրաւորին մէջ տեղակալի աստիճան ունի։

Պերինէ կը հեռագրուի թէ Քրանքո-ռուս ներդաշնակ քաղաքականութեան գտած յաջողութիւնը բուն գծով թեմամբ կը շարունակուի Գերմանիոյ կառավարական ակմբոց մէջ։

Թագուհւոյն Յորեւանին ուղթիւ Անգլիոյ արքայական պալատան մէջ տրուած հացկերոյթը բացառիկ չքեղութիւն մ'ունէին, որովհետեւ գործածուած սպասք Անգլիոյ թագաւորաց յատուկ հին սպասներ են, որք խնամով կը պահուին Ուիտտորի պալատան մէջ եւ որոց արժէքն երկու միլիոն անգլ. ոսկիէ պակաս չի հաշուուիր։ Զօրձ Գ. թագաւորին ժամանակէն Ֆնացած սեղանի սպասները կը բաւեն 130 հրաւիրելոց եւ ամենքն ալ համակ ոսկի են։

Սերպիոյ թագաւորին ու թագուհւոյն միջեւ ծագած հակառակութիւնն այն աստիճանի հասած է որ թագաւորն որոշած է թող չտալ իւր կնոջ որ վերադառնայ Պելլ-րատ կամ մոնէ Սերպիոյ որ եւ է կողմը։ Թագաւորը խնդրել է նախարարապետ Պ. Բիսպիէ՝ այս նպատակաւ հարկաւոր միջոցները ձեռք առնուել։ Յայտնի է թէ Նաթալի թագուհին՝ բաժնուած իւր ամուսնէն՝ Ռուսիա կը գտնուի այս պահուստ, իսկ Միլան թագաւորն ուղեւորութիւն մը կ'ընէ յԵւրոպա։

Ռուսիոյ կայսրը բացառիկ պատիւ մ'ըրեր է Պ. Կաթիկոսի, այցելութեան երթալով համալսարանաց պետին որ ծանրապէս հիւանդ լինելով տունէն դուրս չէր կրնար ելնել։

Անգլիոյ թագուհին յուլիս 4ին (Ն. Տ) ի հարաւային Քէտինկըն, (արուարձան Լոնտոնի) դուրս Գաղթականութեանց մընայուն Արուեստահանդիսին առաջին հիմնադրն, -- հաստատութիւն որ պիտի բարձրանայ իրեւ յաւերժական յիշատակ Ն. Վեհափառութեան Յորեւանին։

Հակառակ իւր հիւանդութեան, Պ. Բառնէլ, ի խնդրոյ իւր զվարճութեամբ գործակցայ, որոշել է մնալ պետ իւրանտական կուսակցութեան, եւ չթողուլ պատերազմի դաշտը՝ կուսոյ ամենէն տաք միջոցին։

Անգլիոյ մէջ եւս, քանի մը շարաթներէ հետեւ տիրող երաշտութիւնն հանրային աղէտի մը հանգամանք կ'առնու։

Ա Զ Գ Ա Յ Ի Ն

Վեհ. Մակար Կաթողիկոսը Կոնքեռ մը նուիրած է Ամեն. Յարութիւն Ս. Պատրիարքին՝ հանդերձ Հայրապետական Կոնգակաւ։ Կրօնական Ժողովը չորեքշաբթի օրն հանդիսաւորապէս Նորին Սրբազնութեան յանձնեց Կոնքեռն ու Կոնգակն որք Պատրիարքարան բերուած էին Աֆիօն Գարահիսարի Տ. Խաչատուր բազմապի ձեռամբ որով աւագ քահանայի տիրոջ տրուեցաւ այս առթիւ։

Հոգեւոյս Աշտարակեցի Ներսէս Կաթողիկոսը միայն Կոնքեռ մը նուիրած էր հոգեւոյս Յակոբ Պատրիարքին։

Ատանայէն յԱզգ. Պատրիարքարան հասած հեռագիր մը տխուր գոյներով կը նկարագրէր գաւառին ազգայնոց վիճակն՝ սպառնացող սովին պատճառաւ։ Այս հեռագրոյ վրայ, Ս. Պատրիարք Հայրն անմիջապէս ի նիստ գումարելով Խառն Ժողովը որոշեց Թագրի մ'ուղղել Բ. Գրան և կայս. կառավարութեան գումարն եւ ուշադրութիւնն հրաւիրել եւ միանգամայն այս մասին պէտք եղածը գրել Կիլիկիոյ Ամեն. Կաթողիկոսին։

Խառն Ժողովը նկատելով որ Տիգրանակերտի մէջ կրօնամիտութիւնը օր աւուր կ'աւելնան, վիճակին այցելու հովիւ կարգեց Նեղեկոյ առաջնորդ Միսիսարեան Գեր. Խորէն Կաթողիկոսին։

Կրօնական Ժողովը չըջարեական մ'ուղղելով մայրաքաղաքիս բոլոր եկեղեցեաց՝ կնաթող եւ այրաթող ազգայնոց, ինչպէս նաեւ հոմանի պահող, ապօրէն, դաղտնի ու կրկին ամուսնացողներուն ցուցակը պահանջեց, յակահէ անուանէ։

Կրօնական Ժողովը հետամուտ է արտօնութիւն խնդրել կրօնական եւ բարոյական թերթի մը հրատարակութեան ընդ իւր տնօրէնութեամբ։

Հասունեան եւ Հակահասունեան ազգայնոց միացման համար քանի մը ամիսներէ հետեւ տեղի ունեցած բանակցութիւնը խզուեցան։

Ն Ե Ր Ք Ի Ն

Պետական Խորհրդոյ օրէնդրական ձեւերն նախագահ Մահմուտ Ճէլալատին փաշա Կրէտէ զրկուեցաւ կայսերական պատուիրակի պաշտօնով։ Կրէտէի գործերը կայս. կառավարութեան անմիջական ուշադրութեան առարկայ եղած էին վերջին ժամանակներս, կղզւոյն Ընդհ. Ժողովոյն կողմէ ներկայացեալ ինչ ինչ խնդրանաց վրայ որոց ստիպողութիւնը բացատրելու համար քրիստոնեայ եւ իսլամ անդամներէ կազմեալ երկու պատգամաւորութիւնը եկած էին ի Կ. Պոլիս։ Կայս. կառավարութիւնը պատգամաւորաց բացատրութիւնները լսելէ յետոյ, տեղւոյ վրայ ըննութեան մը պէտքն զգալով, ընկերացուց զանոնք Մահ-

նացնել զնա առանց դժուարութեան մը բաղխելու։

Ո՞վ կ'ըսէ թէ ամուսնացնելն դժուար գործ է, երբ ամուսիններն ընտրութեան բովէն անցնելու հարկն չտեսնուիր եւ ամէն ինչ ճակատագրին յանձնուելով՝ զբախտն է եղերով կը միտիթարուի մարդ։

Պաղտասար աղա Ջերմեանի սովորութիւն մ'աւելէր. երբ երեկոյին գործէն կը վերադառնար տանը դուռը կը գոցէր եւ նիզը դնել չէր մոռնար բնաւ. այդ սովորութիւնն թաղին մէջ, մինչեւ իսկ թաղէն դուրս գտնուողներու ծանօթ ըլլալով, ո՞չ ոք չէր համարձակել նիզը բանալ տալու ձանձրութիւնը տալ։ Տիկինն ընտանեկան այցելութիւններ տալ եւ ընդունիլ չէր սիրել, վասն զի սիրտ չունէր եւ աշխարհ մութ էր իրեն համար։

Բայց մէկը կար որ քաջ ծանօթ էր տընեցուց եւ երբեմն երբեմն Պաղտասար աղայի հետ շուկայէն կը վերադառնար միասին օդի խմելու համար։ Գասպար աղան էր այդ։

Հետաքրքրական էր լսել օդի խորհրդաւոր արարողութեան միջոցին փոխանակուած տաք խօսակցութիւններն. Պաղտասար աղա՝ մէկ կողմէն, իսկ Գասպար աղա՝ միւս կողմէն, իրենց իմաստասիրական տեսութիւններն ու բարձր գաղափարները պարզել չէին մոռնար. ամուսնութեան վրայ կը խօսէին յաճախ եւ երկուքին ալ խօսքերէն դժուար չէր գուշակել որ ամուսնութեան քողին տակ շահախնդրութեան բազմոտանի ճիւղն էր պահուած։

Գասպար աղա կը փափագէր եւ մտադիր էր ամուսնացնել իւր զաւակն որ ամբողջ գիւղին մէջ իւր ծայրայեղ սրիկայութեամբ, անբարոյական ընթացքով եւ չըռայլ ու զեղիւ բնաւորութեամբ նշանաւոր հանդիսացած 30-32 տարեկան երիտասարդ մ'էր. այնպէս համոզուած էր թէ ամուսնութիւնն իւր օրդուոյն փրկութեան խորիւն պիտի ըլլար եւ պիտի կարենար հեռացնել զինքն այն կորստեան անդնդէն որոյ մէջ կ'զրկէր տակաւ առ տակաւ։

Շատ զեղիւ ու չըռայլ էր Միհրանիկ եւ եթէ այդպէս շարունակէր քիչ ատենէն անբարոյականութեան հնոցներու մէջ պիտի վառէր ու ծախէր իւր ինչքն ու ստացուածքն։ Այդ հարստութիւն որչափ զրծուարութեամբ եւ ինչ տաժանելի աշխատութեամբ գանձուած էր եւ այժմ Միհրանիկ ինչ անհոգութեամբ եւ ինչ դիւրութեամբ կը վատնէր։

Ճշմարիտ է որ Գասպար աղա Պաղտասար աղայէ նուազ ագահ ու կծծի մէկը չէր եւ կարծուած ինչ չափ դիւրաւ չէր յանձնել այդ գումարներն իւր օրդուոյն. այլ իրաւունքն հզօրին էր. երբ Միհրանիկ Բալմայի պատրաստած շէտ և վայելչագեղ հագուստներու տակ պահուած գաշտն ոգին մէջ կը ծածանէր եւ այդու իւր հօր կենաց կը սպառնար, հայրն իւր աղտոտ քսակին բերանը շատ դիւրաւ կը բանար եւ իւր օրդուոյն ձեռաց մէջ կը թափէր մի քանի տասնեակ ոսկիներ։

Այդ մի քանի տասնեակ ոսկիներ, մի քանի արեւ հազիւ տեսած, Բերայի նշանաւոր գոհարափառանոցներու մէջ կը լուծուէին, ոսկի նետեր եւ ոսկի շղթայներ թափուելու համար, եւ Միհրանիկ այդ նետերով ու շղթայներով զինեալ, կը փութար ո՞ր գիտէ ո՞ր անմեղ կուսի սիրտը խոցելու, ու ոտքերն կաշկանդելու եւ կամ նուիրելու այնպիսի լալիք մահկանացուաց որք յար պատրաստ են փոխարինել այդ նուէրներն...

(Շարունակելէ)
ԹԱԼԻԼԷ

Guerlain de Paris.

15, Rue de la Paix.

ՀԱՍՏԱՐԱԿՈՒԹԵԱՆ ԿԵՅԱՆՁՆԱՐԱՐԵՆՔ ՀԵՏԵԻԵՍԼ ՀՈՏԱԻՏ ՆԻԻԹԵՐԸ . Eau de Cologne Imperiale. Sapoceti, օճառ արդուզարդի համար Ambrosial cream, օճառուտ քաշ՝ ամուրի մարդու համար. Crème de Fraises մորթը կակուզցնելու համար . Poudre de Cypres զովացնելու եւ ճերմկցնելու համար մորթը . Stilboideինյալ տալու համար մազերուն եւ մորուն . Eau Athénienne et Eau lustrale հոտ խնկելու եւ մաքրելու համար գլուխը . Alcoolat de Cochlearia ակուայներու համար . Eau de Chypre արդուզարդի համար : Թաշկինակի համար հոտաւէտ նիւթեր՝ Héliotrape, Pao Rosa, Shore's caprice, Maréchale Duchesse, Marie Christine. 977 1-26

մուտ փաշային որ պաշտօն ունի կուսակցութիւններն հաշտեցունել եւ կարելի եղած սահմանին մէջ գոհացում տալ կրէտացւոց :

—Թէրէմանը Հաքէթար լրագիրն յօդուած մը հրատարակած լինելով թուրքերէն գրքի մը նկատմամբ, որոյ վրայ գրելն արգիլեալ էր, անպայման կերպիւ զաղարման դատապարտուեցաւ :

—Քէօթանիոյ կառավարիչ անուանեցաւ Էրկէսի կառավարիչ Հալիմ փաշա :

—Գերմանական դեսպան Պ. ար Րատովի՝ վաղը եւ ուսական դեսպան Պ. ար Նէլիտով յառաջիկայ շաբթու արձակուրդով կը մեկնին մայրաքաղաքէս :

—Նըլտըզի պալատան մօտ Շապը Թէքէ անուն հոյակապ թէքէի մը կառուցման ձեռնարկուեցաւ, հրամանաւ Վեհ Սուլթանին : Շինութեան գործն յանձնուած է ճարտարապետ Ազնաուրեան Յովհաննէս էֆէնիին :

—Իտալիոյ քանի մը քաղաքացի մէջ քուերայի դէպքեր պատահած լինելով, Սիկիլիայէն եւ իտալական նաւահանգիստներէն եկող նաւուց համար հնգօրեայ բարանդինա հաստատուեցաւ օսմ. նաւահանգստաց մէջ :

—Կայս. կառավարութիւնը մէկ միլիոն գրիւ արմախը եւ վեց հարիւր հազար օսաալիւր զրկած է յէկիւրիւր եւ հրամայած միանգամայն օր էնկիւրիէն արմախը դուրս չհանուիլ : Այս առթիւ տեղւոյն երեւելիք եւ աղպակաք շնորհակալաց հետագիր մ'ուղղած են ի Բ. Դուռն :

«ՄԱՍԻՍ» ԳԱՏԱՍԻՍՆԵՐԸ

ՀԸՊԸՈՒ ԴԻՒՂ. — «Վարժարան Հայոց. — Մասնի բաժանորդագրութեան ձեռք երկու տարեկան պարտքն 140 դահկան առ մեզ փութացուցէք եթէ չէք ուզեր որ թերթերու յուղարկումը դադրի : ԳՂԻ. — Տ. Յ. Ա. — Նոյնպէս եւ ձեզ համար :

ԿԱԼԶԻԻ ՄԻՋԱՏԱՍՊԱՆ ՓՈՇԻՆ

ԱՄԵՆԱՋԴՈՒ ԴԵՂ ՍԷ ՄԼԵԿՆԵՐՈՒ, ԼՈՒԵՐՈՒ, ՈՅԼԻՆԵՐՈՒ, ՃԱՆՃԵՐՈՒ, ՄԺԵԳՆԵՐՈՒ, ՄՐՋԻՆՆԵՐՈՒ, ԹՐԺՈՒՐՆԵՐՈՒ, ՅՈՐԵՆԻ ՈՐԴԵՐՈՒ ԵՆ ԴԷՄ :

Քիլօն կը ծախուի 12 Փրանք. թղթատարութեան միջոցաւ, 100 կրամն 1.95 Փր. է. — Նիւնիւն է առ Է. ԿԱԼԶԻ, 71, Գուռ տ'երպոնովի, Լիոն :

Սրեւելից համար ներկայացուցին է Դեղագործական Մթերանոցն, Ղալաթիոյ Մեծ Փողոց, 35, Կ. Պոլիս :

796

6-10

Ջերմապէս կը յանձնարարենք մեր ընթերցողաց գործածել Հէնրի Միւռի Օչօրակն, բուժելու համար իրենց ջղային հիւանդութիւնները, զլիսու պտոյտները, քրնատութիւնները, ջղային ցնցումներն եւն :

Փոքրաքանակ կը վաճառուի ամեն դեղատանց մէջ : Կեդրոնատեղին է Դեղագործական Մթերանոցն, 35, Ղալաթիա Մեծ փողոց :

776

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

Աղեքսանդր Տիւմայի երկասիրութիւններէն ԹԱԳՈՒՀԻՈՅՆ ՄԱՆԵՍԿՆ անուն հետաքրքրաշարժ վիպասանութիւնը (Թարգմ. Բիւզանդ. էֆ. Պօղանէանի) իւրոյ կ'ընծայուի հրատարակիչ Յարութիւն էֆէնիի Բրիտանիոյ կողմէ : Երկրորդ մասն իւրոյ ընծայուած լինելով ջերմեցաւ իւր պատ. բաժանորդաց : Ընթերցանութեան արժանի յոյժ գեղեցիկ վիպասանութիւն մ'է սա եւ կը գտնուի բոլոր գրաւաճառաց քով, ջրափաճառ Պօլոս եւ Յակոբ Աղաներու խանութը, Սէրէթի խանի դէմ ծխափաճառ Գէորգ աղային քով, Բերա, Թիւնէլին դէմ, Նալպանտեան գրատունը, Իզմիր, Չուխա :

Պէղեպէսի Սարգիս էֆ. Թէստէրէճի եւ Ռօտուօ, Ռուբէն էֆ. Գօլանճեանի քով : Մէկ հատորոյ գինն է 12 դրուշ, իսկ բաժանորդաց համար 10 դրուշ :

Այս առթիւ հրատարակիչը կը ծանուցանէ իւր պատ. բաժանորդաց որ թէպէտ Բաւարական Մանկանցի ցրուիչ Պ. Անդրանիկ իրենց պիտի ներկայանար անդորրադրով, սակայն նոր որոյման մը համեմատ դարձեալ նախորդ ցրուիչը, Պ. Գարեգին պիտի հաւաքէ բաժանորդագիրն :

Վասն Սրտօնատեառն Տիօրէն-Պատուոյսանատու Մ. ՏԱՄՍԵՍՆ

ՏՊԱԳՐ. ԱՐԵՎ. ԼԵ ԵՒ ՄԱՍԻՍ ԼՐԱԳՐԱՅ



ՄԼՏՏՄՍՍ Ս. Ա. ԱԼԼԵՆԻՆ

ԵՇԻԵՐԷՇՈՒՆՈՅՈՒ ՄԼՐ. ՆԱՐՈՒՈՒՐ (MRS. S. A. ALLEN'S WORLD'S HAIR RESTORER)

Շերմակ բնկած մազերուն գոյն, վերնիճ ու դեղ կուտայ : Կը նորոգէ անոր կեանքը, ոյժը եւ աճումը : Գլխու թերի շուտ մը աներկութիւնէ : Իր անուշ հոտը առատ է ու հեշտալի :

“Մէկ շիշ կը բաւէ :” Եւ յիշուի որ անոնցան ամենքը որոնցմոխրագունած մազեր իրենց բնական գոյնին դարձան, եւ ճաղատ տեղերը մազով ծածկուեցան :

Կերի չէ, եւ ամենեւին դեան մը չընեն : Թիւ օր կ'ուզես թարմ մազ ունենալ եւ բոլոր կենացդ մէջ պահել, առանց ուշանալու շիշ մը ստացիր ՎԼՏՏՄՍՍ Ս. Ա. ԱԼԼԵՆԻՆ համաշխարհային հաշի Նարոուիչէն. (MRS. S. A. ALLEN'S WORLD'S HAIR RESTORER.)

Գլխաւոր մթերանոցը Լոնտոն է (114 and 116, Southampton Row). Կոյնպէս Բարիդ ու Կիու Եօրք : Կրկաճառուի ամեն սափրիչներու, անոյշ իւղագործներու եւ անդիւղացի դեղագործներու քով :

Կը գտնուի Ն. եւ Ժ. Գանգիւք եղբայրք բրիտանական դեղարանը, Բերա, Մեծ փողոց. Էտմընտ Քարուան, Անգլիական մթերանոց, Նիւքէք Գալտըրըմ. եւ Իզմիր Լազանտէլա 435, Բերա Մեծ փողոց :



ՀԵՐՄԵՆԵԿԸՆ ԾԵՂԱԿԵՓՈՒՆՑ

ԳԵՂԱՅԿԱՅՈՒՆՈՂ ՄԼՐՄՆՈՅ ԳՈՅՆԱՐ, ՍԻՇՏ ԾԵՂԱԿԵՓՈՒՅ, ՄԻՇՏ ԹԵՐՄ :

Ընդամուտն մը փորձը պիտի համոզէ ամեն Տիկին թէ որչափ դերազանց է այս ուրիշ ամեն հեղանիւթներէ եւ բազմաթիւ փոշիներէ : Եւ ահա անպաւ գործածելովն ալ, որ քանի մը վայրկեանի գործ է, պիտի տեսնուի իսկոյն որ երեւը, վիզը, թեւերը եւ ձեռքերը պիտի առնուն անոյշ փափկութիւն մը եւ մարմարիտի փայլ : Հանդերձ շուշանի եւ վարդի գունով եւ բուրմամբ : Սապոնի գրգռիչ յատկութիւնները կը հանգարտեցունեն : Ընհետ կ'ընեն մորթի սեւութը, երեսի եւ ձեռքի ցանկերը, արեւայրուքը, եւ ուրիշ ամեն բրտութիւն եւ բժաւարութիւն : Եւ աս ամեն բանով անկարելի կ'ընեն մասնուել թէ արհեստով գեղեցկացուած է :

Գլխաւոր մթերանոցը Լոնտոն է (114 and 116, Southampton Row). Կոյնպէս Բարիդ ու Կիու Եօրք : Կրկաճառուի սափրիչներու, անոյշ իւղագործներու եւ անդիւղացի դեղագործներու քով :

Կը գտնուի Ն. եւ Ժ. Գանգիւք եղբայրք բրիտանական դեղարանը, Բերա, Մեծ փողոց. Էտմընտ Քարուան, Անգլիական մթերանոց, Նիւքէք Գալտըրըմ. եւ Իզմիր Լազանտէլա 435, Բերա Մեծ փողոց :



ԿԵԱՆՔ. ԱՃՈՒՄՆ Ե ԳԵՂ ՄԱԶԵՐՈՒ :

ՄԷԼԻՐՈՑ

ՄԼՐԵՐՈՒ ՄԵՂ ՀԵՏԻՆ ՆՈՐՈՒԻՉ

Իրապէս իրենց առջի թարմ գոյնին կը դարձունեն ձերմկած կամ գունաթափ մազերը : Կը դադրեցունեն անոնց թափելը : Կը մաքրէ գլուխը, կը վերջացունեն թերի, ու մազերուն նոր կեանք, աճումն, փայլ ու գեղեցկութիւն կուտայ :

Կը վաճառուի երկու չափով՝ մեծ շիշերու մէջ : Գլխաւոր մթերանոցը Լոնտոն է (114 and 116, Southa Apton Row). Կոյնպէս Բարիդ ու Կիու Եօրք :

Կը գտնուի Ն. եւ Ժ. Գանգիւք եղբայրք բրիտանական դեղարանը, Բերա, Մեծ փողոց. Էտմընտ Քարուան, Անգլիական մթերանոց, Նիւքէք Գալտըրըմ. եւ Իզմիր Լազանտէլա 435, Բերա Մեծ փողոց :

